# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 291-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Արմեն Վոլոդյայի Մաթոսյանի դիմումը, անձնագրի պատճենը, ժառանգության իրավունքի վկայագիրը, սեփականության իրավունքի N 816647 կայականը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Արմեն Վոլոդյայի Մաթոսյանին ժառանգության իրավունքով պատկանող, Լոռու մարզի Հաղպատ գյուղում գտնվող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, 1-ին փողոց, բնակելի տուն 19 փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 24
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 292-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ավագանու 30.07.2020թ. N 60-Ա և համայնքի ղեկավարի 04.08.2020թ. N 239-Ա որոշումները, սեփականության իրավունքի N 08012019-06-0040 վկայականը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, 2/29ա թիվ 13 հասցեում գտնվող «Ալավերդի համայնքի թիվ 6 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքին՝ /նախկին՝ «Ալավերդու քաղաքային համայնքի թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ, 13 մանկապարտեզ/, վերահասցեավորման նպատակով, տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, 2/29-1 փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 24
ք. Ալավերդի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 293-Ա

## ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Սահակ Արշալույսի Մամաջանյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի NN 28032019-06-0029, 23012019-06-0005 վկայականները, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի հատակագիծը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Սահակ Արշալույսի Մամաջանյանին սեփականության իրավունքով պատկանող, 0.00335 հա և 0.006 հա մակերեսներով հասարակական կառուցապատման հողամասերը միավորել և առաջացած մեկ միավոր 0.00935 հա մակերեսով հասարակական կառուցապատման հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Թբիլիսյան խճուղի, 3/3 հողամաս փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 24
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 294-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Կարեն Ռուբիկի Պետրոսյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 2278849 վկայականը, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Կարեն Ռուբենի Պետրոսյանի կողմից առուվաճառքի պայմանագրով ձեռք բերված, Ալավերդի քաղաքի Ջրավազանի 70 շենքում գտնվող, 32.8 քմ մակերեսով հասարակական տարածքին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ջրավազան փողոց, 70 շենք, 35 տարածք փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 24
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 295-Ա

### 06-002-0108-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ, ԱՆՆԱ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՄՈՍԻՆՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0.037 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, ‹‹Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին›› Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքով, հիմք ընդունելով Աննա Վլադիմիրի Մոսինյանի կողմից լիազորված անձ՝ Ալբերտ Արմենակի Մոսինյանի դիմումը, անձնագրերի պատճենները, ժառանգության իրավունքի վկայագիրը, տնտեսական գրքից քաղվածքը, «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲԸ-ի կողմից տրված 14.09.2020թ. թիվ 0-40 տեղեկանքը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Վերականգնել Աննա Վլադիմիրի Մոսինյանին ժառանգության իրավունքով պատկանող, Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սանահին թաղամասում գտնվող, 0.037 հա մակերեսով տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը, սեփականության իրավունքը:
2. Նշված հողամասում գտնվող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական

խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող՝ 1920թ. կառուցված բնակելի տունը Հայաստանի Հանրապետության կառավարության 50-Ն օրենքով համարել Աննա Վլադիմիրի Մոսինյանի /ծնված՝ 10.08.1948թ./ սեփականությունը:

3. Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սանահին թաղամասում գտնվող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաքի Սանահին թաղամաս, 3-րդ փողոց, 5 բնակելի տուն փոստային հասցե:
4. Բնակելի տան զբաղեցրած 0.037 հա մակերեսով հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 24
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 296-Ա

## ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԸ, ԱՍՏԻՃԱՆԱՀԱՐԹԱԿՆ ՈՒ ԿԱՏԱՐՎԱԾ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով,18.05.2006թ. N 912-Ն որոշման 11-րդ, 13-րդ կետերով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բաց պատշգամբը, աստիճանահարթակն ու կատարված ձևափոխությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ և պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Սեյրան Հմայակի Ռամազյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 230620-06-0044 վկայականը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲ ընկերության կողմից տրված 17.09.2021թ. N 0-40 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության, և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Կատարված շինարարական աշխատանքները, ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշման համաձայն, դասակարգվում են շինարարական ցածր ռիսկայնության աստիճանի (գտնվում են շինարարական աշխատանքների ռիսկայնության առաջին գոտում), ուստի, միջնորմների, դռների ու պատուհանների փոփոխությունների արդյունքում կատարված ձևափոխությունները շինարարության թույլտվություն չեն պահանջում:

2. Օրինականացնել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Շահումյան փողոց, 23 հասցեում գտնվող, Սեյրան Հմայակի Ռամազյանին սեփականության իրավունքով պատկանող կենցաղի տան 2015թ. ինքնակամ կառուցված 25.1 քմ արտաքին մակերեսով (25.1 քմ ներքին մակերեսով) բաց պատշգամբը, աստիճանահարթակը և կատարված միջնորմների, դռների ու պատուհանների ձևափոխությունները:
3. Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամաս, Շահումյան փողոց, 23 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով պատկանող կենցաղի տանը, վերահասցեավորման նպատակով, տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, Շահումյան փողոց, կենցաղի տուն 23/1 փոստային հասցե:
4. Օրինականացման համար սահմանված ընդհանուր՝ 144006 (հարյուր քառասունչորս հազար վեց) դրամ վճարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Շինության զբաղեցրած 0.085 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
6. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 24

ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 297-Ա

### ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՆԱՀԻՆ ՍԱՐԱՀԱՐԹ ԹԱՂԱՄԱՍ, 1/7 ՇԵՆՔ, N 28 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ավագանու 06.04.2007թ. Հ 23-Ա որոշումը, Ալավերդու քաղսովետի կոմունալ սպասարկման բարեկարգման գրասենյակի 08.01.1980թ. տրված N 24 օրդերը, «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲ ընկերության տնօրենի կողմից 14.09.2021թ. տրված N 0/40 տեղեկանքը, Ալվարդ Սերյոժայի Խեչումյանի դիմումը, բնակ. հանձնաժողովի 24.09.2021թ. N 5 արձանագրությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող՝ ք. Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, 1/7 շենք, N 28 բնակարանը (51.9 քմ ընդհանուր մակերեսով) 25950 դրամով, ուղղակի վաճառքով, օտարել բնակարանի վարձակալներ Ալվարդ Սերյոժայի Խեչումյանին և Կարեն Սանասարի Խեչումյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բնակարանի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 24
ք. Ալավերդի